

Այս տաղը որ ինչպէս տեսանք Երզնկայի պարիսպներու փլուզումին եւ 10,000 երզնկացիներու զետնաթաղ մահուան մասին կը խօսի, Երզնկայի բազմաթիւ շարժերէն միայն 1287ի շարժին կը համապատասխանէ: Ես թէ տաղին եւ թէ երկրաշարժերուն մասին արդէն երկար կը խօսիմ իմ անտիպ բազմաշխատ եւ մեծածաւալ ԵԿԵՂԵԱՅ ԳԱԻԱՌԻ պատմութեանս մէջ: Տաղասացը՝ «Գերի Թորոս» Տարօնեցին իսկ ըլլալու է, որ կե-րեւայ թէ Երզնկայ կամ շրջակաները կը դտնուէր 1287-ին:

* * *

Բ

Երգ վ(ա)ս(ն) Աղահու(թ)ե(ան) ի Թորոսէ:

Աղտեղացա խաւար մեղաւք.
Քան ըզկին պոռնիկ արախու,
Մոռացայ գուխտն ա(ստուա)ծեղէն.
վ(ա)ս(ն) մեղաց ւ անչափ չարու:

Աղահութի(ւ)ն է զիս պատեր.
Զօրն զատիմ հետ զրկելու,
Հանց ժողովեմ զայլոց թարախ.
Զինչ որ հայի զազանն որսու:

Հող մարմընոյս ի կեր կուտամ,
ո(ւ)պ(էս) զարծիւ արեանարբու,
Բերանս եղեր արեան թաթախ.
Ք(ա)ն զղազանացն ի դէմ զիշու:

Զօրն ի զրկել եւ յափշտակել.
Զաչերս ածեմ ք(ա)ն ըզգայլու,
Որ չեմ ջոկեր զս(ուր)բն եւ զանս(ուր)բն.
Կամ բաժաներ զչարն ի բարու:

Հանցեղ եմ ես աղահացեր.
Դէմ զրկանաց ճաչակելոյ,
Ք(ա)ն զարընխում հաւ մսակեր.
Որ զոսկորն ի հետ կուլ տանու: